

18. Բեքփազեի աւանդութիւնները. — 380 ին՝ էթէրիա ուխտաւորուհիին նկարագրութեան և 1106 ին՝ ուղեգիր — ուխտաւոր Դանիէլի համաձայն՝ ցոյց կը տրուի այն տեղը ուր Մատթէոս հանդիպեցաւ Յիսուսի՝ (Յովհ. ԺԱ. 20) Ղազարու գերեզմանին արեւմտեան կողմը՝ հինգ հարիւր քայլ, ըսել է Ձիթենեաց լեռնէն վերջ: Այս տեղւոյն վրայ շինուած է եկեղեցի մը, որու մասին կը վկայէ Թէոդոսիոս Զ. դարուն, իսկ է. ին՝ քանդուած է, վասնզի Սոփրոնիոս պատրիարք չի յիշեր զայն: Նմանապէս նոյն տեղւոյն վրայ կը ներկայացուի՝ թէ Յիսուս հեծնելով իշուն վրայ կը մտնէր Երուսաղէմ: Այդ տեղւոյն անունը Բեթփազէ(*) դրուած է: Ըստ աւանդութեան՝ զոր Ս. Եւպիփան կը յիշատակէ, Ծաղկազարդի Կիւրակէին կը ղերականներ հոն կը փնտռէին ձիթենիի ձիւղ մը դէպի Երուսաղէմ կատարուելիք հանդիսական թափօրին համար(**): Նոյնպէս Յիսուսի եւ Մարթայի հանդիպումը հոն տեղի ունեցաւ՝ ըստ ուղեգիր Դանիէլի: Սաչակիրներու ժամանակ փափաք յայտնուած է այս դէպքերը տեւական յիշատակարանով մը յաւերժացընել: Այս պարագան յայտնի կ'ըլլայ 1871 ին՝ Ձիթենեաց լերան մօտ՝ Բեթանիայի ճանապարհին վրայ գտնուած այն յիշատակարանով՝ որ ժայռի խորանարդ մըն էր, որուն վրայ գծագրուած ու պատկերագծուած էին Բեթանիայի աւետարանական դէպքերը (արեւել-

(*) Էթէրիա ուխտաւորուհին Բեքփազէն չի յիշատակեր, բայց Ռոզինէա Մասթոսի մեկնութեան (Գլ. Ի.) առթիւ կը յիշատակէ այդ տեղը՝ ուր Յիսուս իւրով վրայ նստաւ:

(**) Գ. - է. զար քափօրը կը սկսէր Ձիթենեաց լեռնէն: Բայց ըստ Ս. Յարութեան ծիսարանին, վերջէն նոյն քափօրը կը մեկնէր Բեթանիայէն. հոն էր որ կը փնտռէին ձիթենիի ձիւղը եւ ոչ թէ Բեքփազէ: